ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**

Անուշ Լալազարյան, Հանրակրթության վարչության հանրակրթության և արտադպրոցական կրթության քաղաքականության մշակման և վերլուծության բաժնի պետ

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Շվեդիայի Թագավորություն, Ստոկհոլմ, 2026 թվականի փետրվարի 2-5

3. **Հրավիրող կողմը.**

Շվեդիայի միջազգային զարգացման համագործակցության գործակալություն (Sida) ՍԱԼԱՐ Ինթերնեշընլ կազմակերպության Շվեդիայի տեղական իշխանությունների և տարածաշրջանների ասոցիացիա (SALAR)

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Ուսումնական այցի նպատակն էր ծանոթանալ Շվեդիայի կրթության և ֆինանսական ապակենտրոնացման փորձին և տեղական ինքնակառավարման դերակատարմանը կրթական ծառայությունների կառավարման և մատուցման գործընթացում:

5. **Քննարկված թեմաները.**

Ապակենտրոնացված կառավարման մոդել, ֆինանսավորման մեխանիզմ, կրթական քաղաքականություն, համայնքային պատասխանատվության շրջանակներ.

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Այցելություններ շվեդական համայնքներ, քննարկում ՍԱԼԱՐ-ի (Շվեդիայի տեղական ինքնակառավարման մարմինների և տարածաշրջանների ասոցիացիա) գլխամասային գրասենյակում և պետական մարմիններում աշխատանքային հանդիպումներ:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Հանդիպումների և քննարկումների շարունակություն Հայաստանում, փորձի փոխանակման գործընթացներ: Փաստաթուղթ չի ստորագրվել:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

ՍԱԼԱՐ Ինթերնեշընլ կազմակերպության հետ համագործակցության շարունակականություն:

10.02.2026 թ. /Ա.Լալազարյան/